ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի
ռեկտոր, ԳԽ Նախագահ

_____ Ն. Խ. Սարիբեկյան

«____» _____ 2020թ.

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ԵՐԵՎԱՆ 2020

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2020թ. հունվարից նոր կորոնավիրուսի համավարակի պայմաններում աշխարհն արտառոց իրավիճակում էր հայտնվել: Ստեղծված իրավիճակը մեծ մարտահրավեր էր ոչ միայն պետությունների տնտեսության, առողջապահական համակարգի, այլև կրթական համակարգի համար:

Սկսած 2020թ. մարտի 16-ից, Հայաստանում հայտարարված արտակարգ դրությունից ելնելով, ուսումնական գործընթացի անընդհատությունը ապահովելու նպատակով Ավանդական բժշկության համալսարանը ևս անցավ առցանց ուսուցման:

Առցանց ուսուցումը ուսուցման ձև է, երբ անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և դասախոսի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով:

Սակայն առցանց ուսուցումը և գնահատումը, ըստ էության, նոր փորձություն է ինչպես ուսանողների և դասախոսների, այնպես էլ բուհի համար:

Հիմք ընդունելով ԱԲՀ-ի **«Հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպման»** կարգը, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, ուսումնասիրելով տեղական և արտասահմանյան առաջատար բուհերի փորձը, Ավանդական բժշկության համալսարանը ԱԲՀ-ի ուսանողների շրջանում կազմակերպված առցանց հարցումների արդյունքների, դասախոսների հետ ունեցած քննարկումների հիման վրա առաջարկում է առցանց ուսուցման որակի ապահովման պարզ և միևնույն ժամանակ կարևոր սկզբունքներ:

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համացանցային տեխնոլոգիաները և հեռավար ուսուցումը նոր հնարավորություններ են ստեղծում մասնագետների շարունակական կրթության, վերապատրաստման, երկրորդ մասնագիտություն ստանալու համար, կրթությունը դառնում է ավելի մատչելի:

Հեռավար ուսուցման առավելություններն են.

1. **Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում.** ժամանակակից ծրագրային և տեխնիկական միջոցների կիրառմամբ իրականացվող ուսուցումը էլեկտրոնային կրթությունը դարձնում է առավել արդյունավետ: Ուսուցման գործընթացը դառնում է ավելի դինամիկ՝ հիմնվելով սովորողի և ուսուցանող համակարգի ակտիվ փոխգործակցության վրա: Համացանցի, մասնավորապես արագ համացանցի զարգացման, մուլտիմեդիա տեխնոլոգիաների (ձայն, պատկեր) կիրառման շնորհիվ հեռավար ուսուցման դասընթացները դառնում են ավելի լիարժեք և հետաքրքիր:
2. **Ուսուցման մատչելիություն.** հնարավորություն է տալիս սովորելու բնակավայրից հեռու, առանց հատուկ գործուղումների ու արձակուրդի, ուսման համար օգտագործելով օրվա ցանկացած ժամերը և հանգստյան օրերը: Գործնականում սովորել կարելի է երկրագնդի ցանկացած վայրում, որտեղ կա համակարգիչ և համացանց՝ առանց հրավերի, ճանապարհածախսի և կեցության անհրաժեշտության:
3. **Ճկունություն և ազատություն, մուտք դեպի որակյալ կրթություն.** հնարավորություն է տալիս հեշտությամբ ընտրելու մի քանի լավագույն դասընթաց տարբեր երկրների համալսարաններից: Կարելի է միաժամանակ սովորել տարբեր հաստատություններում և, համեմատելով առաջարկվող դասընթացները, ընտրել լավագույն ուսումնական

հաստատությունը, որտեղ կան ավելի բարձր որակավորում ունեցող մասնագետներ և ուսուցման առավել արդյունավետ տեխնոլոգիաներ: Ցանկացած ժամանակ և ցանկացած վայրում սովորելը ուսանողին թույլ է տալիս կազմել անհատական ուսուցման ժամանակացույց: Հեռավար ուսուցման կազմակերպումը զգալիորեն ավելացնում է այլ քաղաքներից ու երկրներից տվյալ բուհում սովորող ուսանողների թիվը:

4. **Անհատական բնույթ.** հեռավար ուսուցումն ունի ավելի անհատական բնույթ, քանի որ ունկնդիրն ինքն է որոշում ուսուցման ընթացքը: Նա կարող է անհրաժեշտության դեպքում մի քանի անգամ լսել առանձին թեմաներ կամ բաց թողնել առանձին բաժիններ: Հեռավար ուսուցման ընթացքում ուսանողը ձեռք է բերում ինքնակրթության հմտություններ և դառնում ավելի ինքնուրույն ու պատասխանատու: Հեռավար ուսուցումը ուսուցման գործընթացը դարձնում է ավելի ստեղծագործական և անհատական, որը նպաստում է սովորողի ինքնադրսևորմանը:

Հեռավար ուսուցման թերություններն են.

1. Բացակայում է սովորողի և դասախոսի միջև անմիջական հաղորդակցումը:
2. Ոչ բոլորն ունեն անհատական համակարգիչ և համացանց, դժվար է ապահովել անընդհատ մուտք դեպի տեղեկատվական աղբյուրներ, ինչպես նաև տեխնիկական պատրաստվածություն՝ հեռավար ուսուցման միջոցների կիրառման համար:
3. Բարձր պահանջներ է ներկայացվում ուսուցման գործընթացի կազմակերպմանն ու կառավարմանը, բավական բարդ է ունկնդիրներին մոտիվացնելու խնդիրը:
4. Գիտելիքների ստուգման ժամանակ դժվար է պարզել սովորողի ինքնությունը, ապահովել ակադեմիական ազնվությունը: Քանի դեռ չեն առաջարկվել օպտիմալ տեխնոլոգիական լուծումներ, հեռավար ծրագրերի մեծ մասը ենթադրում է առկա քննաշրջան, քանի որ դժվար է ասել, թե ով է կապի մյուս կողմում: Այդ խնդիրը մասնավորապես լուծվում է տեսախցիկների օգնությամբ, ինչը, սակայն, լիարժեք լուծում չէ:
5. Սկզբնական շրջանում բավական մեծ են հեռավար ուսուցման համակարգի ստեղծման և տեխնիկական ապահովման ծախսերը:
6. Բավական տարողունակ է հեռավար ուսուցման համապատասխան դասընթացների մշակման գործընթացը: Այստեղ մեծ դեր ունի համաշխարհային որոնողական ցանցը՝ Google-ը:
7. Տեխնիկական սահմանափակ հնարավորությունների և մոդեմների դանդաղ աշխատանքի պատճառով ձայնը, պատկերը և գրաֆիկան հաճախ ուշացումով են տեղ հասնում, թեպետ համապատասխան տեխնոլոգիաներն անընդհատ բարելավվում են:
8. Որոշ մասնագիտական կրթական ծրագրերում մի շարք գործնական հմտություններ կարելի է ձեռք բերել միայն իրականում (բայց ոչ վիրտուալ) գործնական և լաբորատոր աշխատանքներ կատարելով:
9. Բացասական գործոն է նաև սոցիալական մեկուսացումը. հաղորդակցման տեխնոլոգիաները հանգեցնում են սովորողների մեկուսացման, նվազում է հսկողությունը դասախոսի կողմից:
10. Նվազում է ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերի թիվը, չկա կարծիքների բազմազանություն:

11. Ուսումնագործնական ձեռնարկներին ներկայացվող պահանջները հնարավորություն չեն տալիս հեղինակներին լիարժեք ներկայացնելու ուսուցանվող նյութը:
12. Սովորողները պատրաստ չեն լարված, արդյունավետ ինքնուրույն աշխատանքի, ինքնակազմակերպվելու, ի վիճակի չեն ինքնուրույն պլանավորելու աշխատանքը, բացակայում է ինքնակարգապահությունը:

Չնայած նշված թերություններին՝ աշխարհի բազմաթիվ երկրներում հեռավար ուսուցումն իրական այլընտրանք է ավանդականին: Դրա հանրաճանաչությանը նպաստում է ավանդականի համեմատ ուսուցման ավելի ցածր արժեքը և, անկախ հեռավորությունից, ուսումնական հաստատություն ընտրելու հնարավորությունը:

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հեռավար ուսուցման կարևոր պայման է ուսումնական գործունեության ընթացքում դասախոսի կողմից յուրաքանչյուր ուսումնառողին անհատապես աջակցություն ցուցաբերելը:

Ուսուցման ավանդական մոտեցումներում առաջնային էր ուսուցման բոլոր ձևերում (դաս, խմբային դասախոսություն, հարցում և այլն) դասախոսի անձի դաստիարակչական և ներգործուն դերը: Բազմաթիվ օրինակներ վկայում են, որ դասախոսի գործելաոճը, խոսքը, արտահայտման միջոցները, անձնային որակները, ձայնի տոնը, հնչերանգը կարող են որոշիչ լինել սովորողի կյանքում: Հեռավար ուսուցման դեպքում սակայն այդ դերը նվազում է:

Շատ ուսանողներ հոգեբանական խոչընդոտներ են ունենում իրենց ուսումնական գործունեությունն ինքնուրույն պլանավորելու, ուսումնական արդյունքները ճիշտ գնահատելու հարցում: Այստեղ նրանց օգնության է հասնում դասախոսը: Նա ուսանողին աջակցում է ուսումնական նյութի բովանդակության վերաբերյալ խորհրդատվությամբ, ուսումնական գործունեությունը պլանավորելով, գնահատման առանձնահատուկ համակարգով, թեստերի, ինքնուրույն աշխատանքների և ռեֆերատիվ առաջադրանքներ կատարելիս: Այն պարագայում, երբ դասախոսին փոխարինում է համակարգիչը, ուսանողից պահանջվում է կարգապահություն, պատասխանատվություն, կամային հատկանիշներ, սկսած գործը մինչև վերջ հասցնելու պատրաստակամություն, ինքնակառավարում:

Ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ առաջնային պահանջների թվում է անհատական մոտեցումը յուրաքանչուր ուսանողի նկատմամբ: Այդ պահանջը հնարավոր չէ իրականացնել ուսումնական պարապմունքների խմբային ձևի դեպքում

Հեռավար ուսուցման շնորհիվ սովորողին գործնականում անհատական մոտեցում է ցուցաբերվում, ինչը, անտարակույս, առավելություն է ուսուցման ավանդական ձևերի համեմատությամբ: Դա ուսումնական նյութի անհատական ընկալման, ընտրության հնարավորությունն է, դրա յուրացման ժամանակահատվածի անհատական բաշխումը, նյութի յուրացման արագության կարգավորումը՝ ըստ ուսանողի ընդունակությունների և հնարավորությունների:

Ժամանակակից հաղորդակցական տեխնոլոգիական միջոցները դասախոսի և ուսանողի փոխհարաբերությունները դարձնում են օպերատիվ, արդյունավետ, հարմար և հոգեբանորեն մատչելի:

Այնուհանդերձ, անհատական ուսուցման կիրառման դեպքում չեն ձևավորվում այնպիսի հատկանիշներ, որոնք ձևավորվում են ուսումնական պարապմունքների խմբային

ձևերի կազմակերպման ժամանակ՝ հաղորդակցման, թիմում աշխատելու, փոխօգնություն, աջակցություն, հանդուրժողականություն, խմբի համար պատասխանատվություն կրելու կարողություն և այլն:

Առցանց ուսուցման արդյունավետությունն ուղղակիորեն պայմանավորված է ուսումնական գործընթացն իրականացնող դասախոսների պատրաստվածության աստիճանով: Նրանք պետք է լինեն բազմակողմանի պատրաստված, ժամանակակից մանկավարժական և տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետող, նոր ուսումնաիմացական ցանցային միջավայրում աշխատելուն հոգեբանորեն պատրաստ մասնագետներ:

Առցանց ուսուցման և ավանդական ուսուցման տարբերություններից կարելի է առանձնացնել մի շարք տիպիկ հոգեբանական մանկավարժական խնդիրներ, որոնք ստիպված են լուծել դասախոսներն ու ուսանողները: Դրանք են.

1) դժվարություններ՝ կապված ուսուցման գործընթացի մասնակիցների միջանձնային շփման հետ,

2) խնդիրներ՝ կապված արդյունավետ աշխատող փոքր ուսումնական խմբերի ձևավորման հետ՝ համագործակցված ուսուցում իրականացնելու համար,

3) խնդիրներ՝ կապված ուսանողների կողմից տեղեկատվության ընկալման անհատական առանձնահատկությունների ուսումնասիրության հետ՝ առավել արդյունավետ ուսումնական գործընթաց կազմակերպելու նպատակով,

4) դասախոսի համապատասխանությունը առցանց ուսուցման համար ընտրված մեթոդիկային և մանկավարժական տեխնոլոգիաներին:

ՈՒՂԵՆԻՇՆԵՐ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեզանից շատերը չգիտեն, թե ինչպես առցանց դասավանդել կամ ինչպես զարգանալ այդ գործում, և գուցե չունեն այն սովորելու դրդապատճառ:

Լսարանային դասավանդման ժամանակ շատ բան եք անում, որ ուսանողներն իրենց հարմարավետ զգան: Ողջունում եք նրանց, ժպտում, նայում նրանց աչքերին, «որսում» եք նրանց հայացքը: Այդ նույն սկզբունքը կիրառեք նաև առցանց դասերի ժամանակ:

- Ֆիզիկապես դասախոսը չի կարող ներկա լինել առցանց դասավանդման ժամանակ, սակայն կարևոր է նրա ներկայությունը թվային հարթակում: Դասախոսի ներկայությունն ապահովելու մի քանի պարզ եղանակներ կան՝ օգտագործել հաղորդակցման տարբեր հարթակներ, մեթոդներ, կազմակերպել առցանց քննարկումներ, ուղարկել էլեկտրոնային նամակներ, պարբերաբար հայտարարություններ տարածել և այլն:
- Ինչպես ԱԲՀ-ի հեռավար դասավանդման փորձը, այնպես էլ միջազգային փորձը ցույց է տալիս, որ առցանց դասերն իրականացվում են ավելի ազատ ձևաչափով: Այս

հանգամանքը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է, որ դասախոսը մինչև դասը սկսելը հստակ ներկայացնի դասընթացի նպատակն ու իր ակնկալիքները:

1. ԱԲՀ-ի ուսումնական մասը սովորողներին նախապես տեղեկացնում է, որ դասերն անցկացվելու են դասացուցակով նախատեսված օրերին և ժամերին: Ուսանողների ներկայությունը առցանց դասընթացներին պարտադիր է:

2. Ուսանողներին նախապես յուրաքանչյուր դասընթացից տրվում են անհրաժեշտ ուսումնական նյութերը:

3. Առցանց դասերի տեխնիկական որակն ապահովելու համար համալսարանի ղեկավարության կողմից տրվում են համապատասխան հրահանգներ:

4. Ուսանողների ներգրավվածությունն ապահովելու համար արդյունավետ կլինի, եթե դասախոսը հանձնարարի նրանց գտնել տարբեր տեղեկություններ դասընթացի թեմաների վերաբերյալ, կազմակերպել դրանց քննարկումը, ապա ստուգել և գնահատել իրենց իսկ կատարած աշխատանքները և այլն:

5. Առցանց դասերի շրջանակում թվային հարթակը լսարանն է: Մեր նպատակներից մեկն այն է, որ ուսանողները միմյանց աջակցեն հաղթահարելու այս մարտահրավերը և խրախուսեն միմյանց հենց թվային հարթակում: Հորդորեք ուսանողներին ստեղծել ֆորումներ քննարկումների համար: Այս ձևաչափում ակտիվ հաղորդակցումը կնպաստի նոր գիտելիքների ձեռքբերմանը:

6. Եթե դասախոսը գրավոր տարբերակով է հաղորդակցվում ուսանողների հետ, ապա ուսանողի աշխատանքը գրավոր տարբերակով մեկնաբանելուց առաջ պետք է նախապես մշակի իր տեքստը՝ պարզ, հասարակ և քաղաքավարի՝ հավելյալ մեկնաբանություններից խուսափելու համար:

7. Որոշակի քանակի դասընթացներ անցկացնելուց հետո ցանկալի է հարցում կատարել ուսանողների շրջանում՝ հասկանալու համար նրանց կարծիքը դասընթացի վերաբերյալ:

8. Լինելով ուսումնառության նոր մեթոդ՝ հնարավոր է, որ առցանց ուսուցումը հեշտ հասանելի չլինի բոլոր ուսանողներին, նրանց մեջ լինեն այնպիսիք, ովքեր ընկճված և մենակ կզգան իրենց թվային հարթակում: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ ցանկալի է, որ, խմբային հաղորդակցություններից բացի, լինեն նաև անհատական հաղորդակցություններ: Օրինակ՝ դասախոսը կարող է անհատականացված մեկնաբանություններ թողնել քննարկումների ժամանակ ուսանողների կատարած հայտարարությունների վերաբերյալ, որոնք ուղղված կլինեն միայն մեկ ուսանողի:

9. Խրախուսվում է թե՛ խմբային և թե՛ անհատական աշխատանքների կատարումը: Խմբային և անհատական նախագծերի համադրումը առցանց ուսուցման հաջողությունն ապահովելու լավագույն միջոցներից է: Ուսուցման տարբեր ոճերի կիրառումը կզարգացնի ուսանողների ընկալման կարողությունները և կնպաստի, որ վերջիններս գիտակցեն ինչպես խմբային աշխատանքի, այնպես էլ անհատական նվաճումների կարևորությունը:

10. Առցանց ուսուցման ժամանակ առավել արդյունավետ է ավելի հասանելի ռեսուրսների օգտագործումը: Օգտագործելով արդիական և հասանելի այնպիսի ռեսուրսներ, ինչպիսիք են թվային հրապարակումները, տեղեկատվական կայքերը և դասընթացի ծրագրով նախատեսված դասախոսությունների էլեկտրոնային տարբերակը, տեսաֆիլմեր, մասնագիտական բովանդակային նկարներ, գործիքներ, մակրո- և միկրոպրեպարատներ,

մուլյաժներ, տարբեր փորձեր՝ ինչպես դասախոսի կողմից կատարվող, այնպես էլ պատրաստի տեսանյութեր /լաբորատոր կենդանիների, նյութերի վրա և այլ/: Դասախոսության ավարտից հետո, ուսանողներին տրամադրվում է ինչպես դասախոսության ppt ֆայլը, այնպես էլ տեսաձայնագրությունը՝ էլեկտրոնային փոստով կամ այլ հարթակների միջոցով:

11. Ըստ էության, լավ դասախոսը պետք է լինի ուսանողի կողքին, բացատրի, ուղղորդի, առաջնորդի, պատասխանի նրանց հարցերին և այլ: Դասախոսն այս ամենն անում է իր ուսանողներին հնարավորինս շատ գիտելիքներ փոխանցելու նպատակով: Ուստի, տեսանելի և իմաստալից ներկայություն ապահովելու համար կարևոր է ծրագրել յուրաքանչյուր շաբաթվա աշխատանքը: Այսպես.

1. Ամեն շաբաթ տեղադրեք հայտարարություն՝ հաջորդ շաբաթվա թեմայի կատարվելիք աշխատանքի վերաբերյալ:
2. Առցանց հարթակներում ուսանողների և դասախոսների միջև ձևավորված խմբերում ակտիվ մասնակցել քննարկումներին:
3. Տեղադրեք կարճ տեսահոլովակ դասի թեմայի կամ առաջադրանքի վերաբերյալ:

- Դասընթացներն անհրաժեշտ է կազմակերպել հնարավորինս հաճելի և հետաքրքիր: Առցանց դասերն ավելի կհետաքրքրեն ուսանողներին, եթե՝

1. օգտագործեք շատ պատկերներ, ինտերակտիվ գործիքներ և կարճ տեսահոլովակներ,
2. հաղորդեք դրական և լավատեսական մտքեր, վստահեցրեք ուսանողներին, որ ամեն ինչ լավ է լինելու, պատմեք ձեր ոլորտում հաջողության հասած մարդկանց մասին,
3. ցուցաբերեք հոգատարություն և կարեկցանք ձեր ուսանողների հանդեպ,
4. հարգեք նրանց ժամանակը և ներգրավվածությունը դասընթացին ձեր ներկայությամբ և ներգրավվածությամբ:

Ինչպե՞ս ապահովել ուսանողների մասնակցությունն առցանց դասերին

(աղբյուր՝ https://www.insidehighered.com/)

1. **Օգտագործեք Ձեր ուսանողների հետազոտական և ստեղծագործական կարողությունները:**
   - Առաջադրանքները պլանավորելիս մտածեք, թե վիրտուալ միջավայրում ուսանողներն ինչն են գերազանց իրականացնում և նրանց հանձնարարականներ տվեք՝ հիմնվելով այդ կարողությունների վրա:
   - Օնլայն միջավայրում ուսանողներն արագորեն դառնում են բովանդակություն ստեղծող և տարածող: Ուստի նրանց հանձնարարականներ տվեք, որոնք կխրախուսեն դառնալ նոր բովանդակության համահեղինակ կամ գործընկերային գնահատում իրականացնել:
2. **Կարևորեք խմբային նախագծեր:**
   - Ի՞նչ պետք է սովորեն ուսանողները:
   - Մշակեք վարժություններ և առաջադրանքներ, որոնք նրանց հնարավորություն կտան մտածել այդ ուղղությամբ, արտահայտվել և միմյանցից սովորել:
3. **Շփվել ուսանողների հետ:**
   - Անկախ այն բանից, ստուգում եք ուսանողի ներկայացրած առաջադրանքը, մեկնաբանում եք, թե խմբային դաս եք վարում, մշտապես շփվեք ուսանողների հետ:

- Յուրաքանչյուր ուսանող պետք է զգա, որ Ձեր ուշադրության կենտրոնում է:

4. **Խրախուսեք հարցադրումները:**
   - Վիրտուալ միջավայրում շփման խոչընդոտներն ավելի քիչ են: Ուստի ուսանողների հետ կարող եք շփվել նաև դասից դուրս:
   - Խրախուսեք, որ ուսանոնղերը աշխատանքային ժամերին հարցեր ուղղեն Ձեզ:
5. **Խառը մոտեցում կիրառեք:**
   - Կիրառեք դասավանդման տարատեսակ մոտեցումներ:
   - Դասախոսությունը մաս-մաս մատուցեք՝ այն համադրելով ինքնուրույն ու խմբային աշխատանքների հետ:
6. **Ընդգծեք ուսանողների անհատական փորձը:**
   - Եթե լսարանային միջավայրում ուսանողները շփվում են միմյանց հետ և քաջատեղյակ են միմյանց փորձին ու հաջողություններին, ապա օնլայն միջավայրում այդպես չէ:
   - Կարևոր է, որ դասախոսը խրախուսի ուսանողներին կիսվել իրենց փորձով, ընդգծի օրինակելի փորձը:

Ինչպե՞ս կազմակերպել դասավանդումն ու ուսումնառությունը առցանց ուսուցման պայմաններում՝ խուսափելով կրթության որակի վրա բացասական ազդեցությունից:

Առցանց ուսուցում իրականացնելիս ցանկալի է հաշվի առնել հետևյալը.

1. Առցանց ուսուցումը և գնահատումը պարզապես վիրտուալ ուսումնական միջավայրում դասախոսություններ տեղադրելը չէ: Այս պարագայում ևս դասավանդումը պետք է պլանավորված և կառուցված լինի նույն պատասխանատվությամբ և մանրամասնությամբ, ինչպես լսարանային ուսման ժամանակ:
2. Կարևոր է, որ դասավանդման նոր եղանակը հնարավորինս պահպանի նաև լսարանային ուսուցման առավելությունները:
3. Անհրաժեշտ է հստակ նկարագրել ուսանողներից ակնկալվող արդյունքները հաղորդակցման նոր պայմաններում, և դրանք համապատասխանեցնել ծրագրի ուսումնառության վերջնարդյունքներին:
4. Համոզվեք, որ բոլոր ուսանողներն ունեն համապատասխան սարքավորումներ և հեռահաղորդակցության հնարավորություն, որոնք անհրաժեշտ են առցանց ուսուցման և ընթացիկ գնահատման մեջ լիարժեք ներգրավվելու համար: Համընդհանուր ինքնամեկուսացման նախազգուշական միջոցառումների պայմաններում ուսանողներն իրենց բնակարաններում կարող են սահմանափակ տարածք ունենալ առցանց աշխատելու համար:
5. Անկախ թվային գրագիտության մակարդակից՝ հնարավոր է՝ SS համակարգերից օգտվելիս ուսանողներն ավելի քան երբևէ աջակցության կարիք ունենան: Ուստի հարկ կլինի նման դեպքերում մասնագետի աջակցությամբ ապահովել հավասարապես բոլորին, ինչպես նաև ստուգել՝ առցանց ուսուցման և գնահատման ժամանակ արդյոք համացանցը հասո՞ւ է բոլոր ուսանողներին:
6. Որակի ապահովման չափանիշները ենթադրում են, որ բուհերը պետք է ունենան բավարար ռեսուրսներ և ուսանողների աջակցության ծառայություններ՝ ապահովելու բարձրորակ կրթություն: Սա վերաբերում է նաև առցանց ուսուցմանը: Անհրաժեշտ է ցուցաբերել ճկունություն. նույնական լուծումները ոչ բոլորին են համապատասխանում:

7. Առցանց դասավանդումը գուցե նույնչափ հարմար չլինի բոլոր դասընթացների համար: Անհրաժեշտ է, որ դասախոսական կազմը դասավանդումը հարմարեցնի առցանց ձևին՝ օգտագործելով լրացուցիչ մատչելի մեթոդներ և ռեսուրսներ: Հնարավոր է նաև, որ որոշ դասախոսներ աջակցության կարիք ունենան այս հարցում:
8. Դասախոսները պետք է վերաիմաստավորեն ուսումնառության վերջնարդյունքները յուրաքանչյուր դասընթացի համար: Դրանք պետք է վերապլանավորվեն այնպես, որ առցանց ուսուցման պայմաններում ուսանողներն իրատեսական հնարավորություն ունենան հասնելու ակնկալվող վերջնարդյունքներին և վաստակելու համապատասխան կրեդիտները:
9. Առցանց ուսուցմամբ առաջացած խոչընդոտներին ինչ լուծում էլ բուհը տա, մինչև վերջնական որոշում կայացնելը հարկավոր է խորհրդակցել ուսանողների հետ՝ առցանց եղանակով:
10. Անհրաժեշտ կլինի իրականացնել ուսանողների և դասախոսների ծանրաբեռնվածության գնահատում՝ հետագայում լրացուցիչ դասընթացներով լրացնելու դասավանդման, ուսումնառության և գնահատման հնարավոր բացերը:

Որոշ դասընթացներ պահանջում են սահմանված քանակությամբ գործնական ժամեր կամ գնահատման հատուկ կառուցակարգեր: Այդ պատճառով հարկ է վերապլանավորել ծրագիրն այնպես, որ իրավիճակի կայունացումից հետո ուսանողները հնարավորություն ունենան ձեռք բերելու սահմանված պրակտիկ հմտությունները հարակից առարկաների կամ ուսումնական այլ գործունեության միջոցով (ավարտական կուրսերի համար հատուկ մոտեցման կարիք ունեն միայն ավարտական քննությունները):

Առցանց ուսուցման համակարգով աշխատող դասախոսը պարտավոր է.

1. իմանալ համակարգչի աշխատանքի հիմնական սկզբունքներն ու կառուցվածքը,
2. տիրապետել ժամանակակից համակարգչային ծրագրերին,
3. ունենալ համացանցում աշխատելու հմտություններ և կարողանալ դրանք կիրառել ուսուցման գործընթացում,
4. իմանալ և կարողանալ կիրառել նոր տեղեկատվական տեխնոլոգիաներ,
5. կարողանալ հպմակարգչի ունեցած բոլոր հնարավորություններն օգտագործել ուսուցման գործընթացում,
6. կարողանալ պահպանել տեղեկությունը, վերլուծել և ընտրել այն ներկայացնելու անհրաժեշտ միջոցները, ինչպես նաև օգտագործել անհրաժեշտ տվյալները որոշումներ կայացնելու համար,
7. իմանալ՝ ինչպես կիրառել հեռահաղորդակցության տարբեր միջոցները (էլեկտրոնային փոստ, սկայպ և այլն),
8. իմանալ հեռակոնֆերանսների, վեբինարների կազմակերպման և անցկացման առանձնահատկությունները,
9. ծանոթ լինել համակարգչային փնտրող ծրագրերին և իմանալ՝ ինչպես փնտրել անհրաժեշտ տեղեկությունը ցանցում,
10. իմանալ՝ ինչպես աշխատել ցանցում եղած տեղեկատվական աղբյուրների հետ, ինչպես վարել երկխոսություն ցանցի այլ օգտատերերի հետ և այլն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Հեռավար ուսուցման կազմակերպումը և իրականացումը կանոնակարգող փաստաթղթերի ժողովածու Խ. Բեգիրջյան, Վ. Խաչատրյան, Գ. Հովհաննիսյան, Ս. Բաբայան.- Եր.: ՀՀ պետական կառավարման ակադեմիա, 2017թ.- 152 էջ:
2. Ուղեցույց բուհերին առցանց ուսուցումը որակի ապահովման չափանիշներին համապատասխան կազմակերպելու համար, 2020, http://www.anqa.am/hy/հրապարակումներ/.
3. How to Be a Better Online Teacher, ADVICE GUIDE, https://www.chronicle.com/interactives/advice-online-teaching.
4. https://www.insidehighered.com/
5. 10 Best Practices To Be An Effective Online Teacher, https://elearningindustry.com/10-best-practices-effective-online-teacher.